Ելփին

Բնակավայրի վարչական ղեկավար՝ Անդրանիկ Աղախանյան
Հեռախոս՝ +37494 22 68 44

Ելփին գյուղը գտնվում է ներկայիս Վայոց ձորի մարզի հարավ-արևմտյան մասում, հանդիսանալով մարզի դարպաս։ Հողատարածությունները ձգվում են ծովի մակերևույթից 1400մ-ից մինչև 2800մ բարձրության սահմաններում։ Բնակավայրը գտնվում է 1545մ բարձրության վրա։ Մարզկենտրոն Եղեգնաձորից հեռու է 25 կմ, մայրաքաղաք Երևանից՝ 97 կմ։ Եփինն արևմուտքից սահմանակից է Արարատի մարզի Զանգակատուն համայնքին, արևելքից՝ Վայոց ձորի մարզի Արենի համայնքի Չիվա բնակավայրին, հարավից՝ Նախիջևանի ինքնավար հանրապետությանը։ Ելփինը ահմանամերձ բնակավայր է։

Մթնոլորտային տեղումների տարեկան միջին քանակը տատանվում է 280-350մմ-ի սահմաններում, կլիման՝ մեղմ է։ Ամենաբարձր դրական աստիճանն արձանագրվել է +43˚, ամենացածրը՝ -30˚։

Ելփին գյուղը վերաբնակեցվել է 1828թ. ռուս-պարսկական պատերազմից հետո, պատմական Հայաստանի Սալմաստ գավառի Բրադես գյուղից տեղափոխված հայերով։ Գյուղի ներկայիս անվանումն առաջացել է գյուղի տարածքում գտնվող պատմական բնակավայրի անվանման՝ Նրբույն-Նրբին-Էրփին-Ելփին ձևափոխությունից։ Նրբույն գյուղի մասին կա հիշատակություն Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն նահանգին Սիսական» գրքում։

Գյուղից մի փոքր հյուսիս գտնվել է պատմական Նորո գյուղը, իսկ այդ գյուղից վերև՝ Շրեստի սարի գլխին՝ Նորոբերդը, որի մնացորդները դեռևս առկա են այդ տարածքում։ Ըստ նույն աղբյուրի Ելփին գյուղի ներկայիս վարչական տարածքում են գտնվում պատմական Աղոպեն, Խնձորուտ, Կեչուտ, Ճոճանակ, Ճավաձոր, Մոխրոտ և այլ հին (ավերված) բնակատեղիներ։

Ելփինի տարածքում կան 10-14-րդ դարերի խաչքարեր, գյուղամիջում նորաբաց եկեղեցի, իսկ գյուղից մի փոքր վերև՝ դեպի մայրաքաղաք ձգվող ավտոմայրուղուն հարակից տարածքում պահպանվել է 17-րդ դարի Թուխ Մանուկ մատուռը։

Բնակչությունն զբաղվում է հացահատիկի, ծխախոտի մշակությամբ, այգեգործությամբ և անասնապահությամբ։

Գյուղի հյուսիսում՝ «Կեչուտ» հանդամասի ճանապարհին, Ելփին գետի աջակողմյան մասում կա հանգստյան գոտի՝ փոքրիկ լճակով ու գեղեցիկ տաղավարներով։

ՀՀ կառավարության կողմից 2002 թվականին հաստատվել է Վայոց ձորի մարզի Եփին գյուղի պատմության և մշակույթի հուշարձանների ցանկը, որում ներառված է ընդամենը 7 հուշարձան։